

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Քեշմիրի Արսին Փարվիզի

ՀԱՐԱՎԹԱԹԱԿԱՆ ԹԱՔԵՍՏԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ

**Ժ.02.06 «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների, դոկտոր
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մ. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վ. Ս. Ոսկանյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. մարտի 10-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ Հր.
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի
15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. փետրվարի 10-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

բանասիրական գիտությունների
թեկնածու Ն. Ս. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Թեմայի արդիականությունը

Գրական ավանդույթից գուրկ հարավթաթական կամ նոր ազարիական բարբառների ու լեզուների, որոնց շարքին է դասվում նաև Թաքեստան ավանի բարբառը, գրառման և ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ վերջիններս, ենթարկվելով իրանի պետական լեզու պարսկերենի և երկրի հյուսիսարևմտյան շրջաններում լայն տարածում ունեցող ատրպատականյան խոսակցական թյուրքերենի օրըստօրե աճող ազդեցությանը, կանգնած են լիակատար մոռացության և վերջնական կորստյան անմիջական վտանգի առջև: Հարավթաթական բարբառներին նվիրված աշխատանքները խիստ սակավաթիվ են՝ մեծ մասամբ գրված ընդհանուր ակնարկների տեսքով, իսկ երբեմն առանց նույնիսկ հաշվի առնելու արդի լեզվաբանության նորագույն ձեռքբերումներն ու մեթոդաբանությունը: Բացի այս՝ մինչև օրս հրապարակի վրա չկա որևէ ուսումնասիրություն, որն ընդգրկի մասնավորապես հարավթաթական Թաքեստանի բարբառի հնչյունական և քերականական լիակատար քննությունը: Հարկ է նշել նաև, որ իր ամբողջության մեջ ուսումնասիրության առարկա բարբառի նյութը երբևիցե չի ենթարկվել նաև պատմահամեմատական քիչ թե շատ ամբողջական քննության:

Թաքեստանի բարբառի լեզվական նյութի ներմուծումն իրանական լեզվաբանության ոլորտ օգնում է լուծել նաև ցեղակից լեզուների և բարբառների ցարդ չլուսաբանվող բազմաթիվ խնդիրներ՝ ընդհուպ մինչև հյուսիսարևմտյան իրանական լեզվատարածքի որոշ հատկանիշների վերանայում:

Խնդրո առարկա բարբառի ուսումնասիրությունը, հանդիսանալով իրանական բարբառագիտության կարևորագույն խնդիրներից, խիստ արդիական է թե՛ իրանական լեզվաբանության և թե՛, մասնավորապես, հյուսիսարևմտյան ու հարավթաթական բարբառախմբի իրանական լեզուների և բարբառների համեմատական քննության տեսանկյուններից:

2. Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Ներկա ատենախոսության նպատակն է ԻԻՀ Ղազվին նահանգի Թաքեստան ավանում և շրջական գյուղերում հավաքված դաշտային նյութերի և խնդրին առնչվող առկա գրականության հիման վրա իրականացնել հարավթաթական Թաքեստանի բարբառի համաժամանակյա և մասամբ տարածամանակյա ուսումնասիրություն: Այս նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա. Հնարավորին համապարփակ կերպով գրանցել և ներկայացնել բարբառի լեզվական նյութը:

բ. Գրի առնված նյութերը ենթարկել հնչյունական և քերականական համակողմանի վերլուծության:

գ. Վեր հանել բնիկ քերականական ձևերն ու բառապաշարը և ցույց տալ ատրպատականյան թյուրքերենի և պարսկերենի ազդեցության սահմանները:

դ. Հաշվի առնելով իրանական լեզվաբանության ընձեռած հնարավորությունները՝ ծագումնաբանական քննության ենթարկել բարբառի բաղաձայնական համակարգը:

ե. Դիտարկել Թաքեստանի բարբառը հարավթաթական բարբառների համակարգում և պարզել ներբարբառային որոշ փոխառնչակցություններ:

զ. Ճշգրտել հյուսիսարևմտյան իրանական լեզուները և մասնավորապես դրա մաս կազմող հարավթաթական բարբառախումբը բնորոշող հնչյունական զարգացումների բույլը:

ը. Որոշարկել Թաքեստանի բարբառի տեղը հարավթաթական բարբառախմբի շրջանակներում:

3. Աշխատանքի գիտական նորույթը

Հարավթաթական Թաքեստանի բարբառին նվիրված որևէ առանձին գիտական ուսումնասիրություն մինչ այժմ չի կատարվել, իսկ ատենախոսության թեմային լոկ ընդհանուր առմամբ առնչվող հետազոտությունների մի զգալի մասը վերաբերում է դեռևս իրանական բարբառագիտության ձևավորման ու կայացման ժամանակաշրջանին, ուստի՝ դրանց գերակշիռ մասն այժմ արդեն հնացած է կամ, նկատի առնելով լեզվաբանության նորագույն ձեռքբերումները, առնվազն կարիք ունի որոշակի քննական մոտեցման:

Աշխատանքում ընդգրկվել է դաշտային ուսումնասիրությունների ընթացքում հավաքված բավական ծավալուն բոլորովին նոր լեզվական նյութ, որը մինչ այժմ հայտնի չի եղել իրանագիտությանը:

Առաջին անգամ փորձ է արվել, լիակատար համաժամանակյա նկարագրական քննության ենթարկել Թաքեստանի բարբառի հնչյունական համակարգը և ձևաբանական առանձնահատկությունները, իսկ վերջինիս բաղաձայնական համակարգն ու բառապաշարը, ինչպես նաև որոշ քերականական ձևեր ենթարկվել են նաև պատմահամեմատական քննության:

Ճշգրտվել են նախկին հետազոտողների կողմից ներկայացված որոշ քերականական հատկանիշներ, ներկայացվել են մինչև այժմ անհայտ մնացած բազմաթիվ նոր ձևեր:

Առաջարկվել են մի շարք ցարդ չստուգաբանված կամ անհայտ բառերի ստուգաբանություններ:

Կատարվել են նոր իրանական բարբառագիտությանն առնչվող որոշ եզրաբանական ճշգրտումներ և նորամուծություններ:

4. Աշխատանքի գործնական նշանակությունը

Ներկա ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպաստել իրանական բարբառագիտության մի շարք առանցքային հարցերի լուսաբանմանը՝ Թաքեստանի բարբառի և մյուս իրանական լեզուների, նաև,

առանձին վերցրած, այս բարբառի և հարավթաթական բարբառախմբի հարաբերակցության տեսանկյունից: Պատմահամեմատական լեզվաբանության օգնությամբ ձեռք բերված տվյալներն ու վերլուծությունները կարող են նաև անգնահատելի նյութ հանդիսանալ տվյալ բարբառով խոսող հանրույթի վաղնջական պատմության մուծ էջերին լույս սփռելու նպատակ հետապնդող պատմաբանի համար:

Բացի այս՝ աշխատանքում առաջարկված զգալի թվով նոր ստուգաբանությունները կարող են օգտակար լինել իրանական տարբեր բարբառների ուսումնասիրության, ինչպես նաև համեմատական բնույթ ունեցող համաիրանական ստուգաբանական բառարանների կազմման ընթացքում:

5. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեջ որպես մեթոդական հիմք զուգահեռաբար օգտագործվել են նկարագրական, տիպաբանական համեմատության և պատմահամեմատական լեզվաբանության ձեռքբերումները: Նշված մեթոդների զուգահեռ կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսությունը նպատակ է հետապնդում Թաքեստանի բարբառը դիտարկել թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա լեզվաբանական վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև բացահայտել ցեղակից լեզուների և բարբառների հետ վերջինիս ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

6. Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է իրանական լեզուների, այդ թվում նաև տվյալ բարբառի զարգացման բոլոր փուլերը՝ սկսած հին իրանական լեզվական ընդհանրության շրջանից մինչև միջին և նոր իրանական լեզուներ և բարբառներ: Խնդրին առնչվող լեզվական նյութն իր մեջ ներառում է 20–րդ դարի առաջին կեսի պատահիկային գրանցումներից ընդհուպ մինչև մեր օրերը գրի առնված նյութեր՝ նաև Թաքեստանի շրջակա գյուղերից և բնակավայրերից:

7. Աշխատանքի փորձաքնությունը

Ատենախոսության մի շարք դրույթներ ու եզրակացություններ լուսաբանվել են «Իրան–նամե» և “Orientalia” գիտական հանդեսներում ու ժողովածուներում հեղինակի լույս ընծայած հոդվածներում, ինչպես նաև Ղազվինի Համալսարանում և ԵՊՀ Իրանագիտության ամբիոնում 2010–20013թթ. անցկացված սեմինարների ընթացքում կարդացված ելույթներում ու զեկուցումներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության

ամբիոնում: Առանձին հիմնախնդիրներ քննարկվել են նաև իրանցի և արտերկրյա մասնագետների ու համապատասխան ոլորտների գիտնականների հետ:

8. Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսության հիմնական մասը կազմված է ներածությունից, համապատասխան ենթագլուխներից և ենթաբաժիններից բաղկացած երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների ցուցակից և օգտագործված գրականության ցանկից:

9. Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և պարսկերեն տարբերակի աշխատություններ, որոնք առնչվում են ոչ միայն Թաքեստանի բարբառին, այլև, ընդհանրապես, իրանական լեզվաճյուղի հարավթաթական բարբառներին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ քննարկվում է Թաքեստան ավանի և հարևան գյուղերի աշխարհագրական տեղագրությունը, ներկայացվում են ընդհանուր նկատառումներ հավաքված լեզվական նյութի, կիրառված տառադարձության սկզբունքների, քննության ձևի և շրջանակների մասին:

Առանձին ենթագլխով արծարծվում է Թաքեստանի բարբառախմբի իրանական լեզուների շրջանակում զբաղեցրած տեղի հիմնահարցը, քննարկվում են Թաքեստանի և ցեղակից բարբառների համեմատական ուրվագծերը, համառոտ ակնարկով ներկայացվում են բարբառի ընդհանուր հատկանիշները՝ որոշ տարածամանակյա կտրվածքով:

Հարավթաթական բարբառախմբին նվիրված առկա բազմալեզու գրականության մանրամասն տեսության միջոցով մատուցվում է վերջինիս ուսումնասիրության պատմությունը, առանձին–առանձին անդրադարձ է կատարվում զանազան հեղինակների աշխատություններին:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում քննարկվում է հարավթաթական Թաքեստանի բարբառի հնչյունական համակարգը՝ համաժամանակյա վերլուծության տեսանկյունից:

Ակնհայտ է, որ քննության առարկա բարբառի հնչյունական համակարգը, առանձին բացառություններով հանդերձ, փաստորեն նույնական է պատմական Ատրպատականում տարածված հարավթաթական մյուս բոլոր բարբառների և թալիշերենի հնչյունական համակարգի հետ: Հյուսիսարևմտյան իրանական լեզուների շրջանակում այս բարբառներն առանձնանում են

ձայնավորների համակարգում՝ կարճ ü և ö հնչյունների առկայությամբ, իսկ բաղաձայնների ոլորտում՝ k, g, č և j հնչյունների հաճախ ծայր աստիճան քմայնացմամբ: Նշված առանձնահատկություններն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են ոչ միայն այս բարբառների ներքին զարգացման օրինաչափություններով, այլ նաև ատրպատականյան թուրքերենի արտաքին ազդեցությամբ:

Թաքեսթանի բարբառի ձայնավորական համակարգն ավելի հարուստ է (7 ձայնավոր), քան ժամանակակից գրական պարսկերենինը (6 ձայնավոր) և ներկայանում է հետևյալ տեսքով.

	<i>Առաջնալեզվային</i>	<i>Միջնալեզվային</i>	<i>Ետնալեզվային</i>
<i>Երկար</i>	i		u ā
<i>Կարճ</i>	a e	ö	o

Բոլոր ձայնավորները շեշտակիր դիրքում հնչում են ավելի երկար, մինչդեռ, անշեշտ վանկում կարող են ծայր աստիճան կրճատվել: Շեշտի հանդեպ առավել զգայուն է պատմականորեն կարճ **a** հնչույթը, որը շեշտի ազդեցության տակ կամ *r*-ից առաջ որակապես մոտենում, իսկ հաճախ ուղղակիորեն համընկնում է երկար **ā**-ի հետ, մինչդեռ անշեշտ դիրքում վերջինիս հնչողությունը ընդհուպ մերձենում է **ā**-ին: Նույնը կարելի է ասել նաև **o** հնչույթի մասին, որի ձայնածավալը, կախված շեշտից, կարող է տատանվել **ō**-ից մինչև **ö**:

Բացի ձայնավորներից բարբառում վկայված են չորս երկհնչյուններ՝ *ay/ey, ow, uy* և *ev*, որոնք հանդիպում են համեմատաբար սակավ բառերում:

Բաղաձայնական համակարգի առումով Թաքեստանի բարբառը շատ քիչ է տարբերվում հարավթաթական բարբառախմբի մյուս անդամներից և պարսկերենից: Այստեղ չկա Չալի բարբառին բնորոշ *xw*- բաղաձայնական խումբը կամ «բարդ բաղաձայնը», որը պարզեցվել է *x*-ի: Բարբառի բաղաձայնները հետևյալներն են՝ *b, p, f, g, k, x, h, γ, q, d, t, j, č, z, s, š, ž, m, n, r, l, v, y*. Այսպիսով՝ հարավթաթական Թաքեստանի բարբառում կարելի է տարբերակել 24 բաղաձայն.

		<i>Երթնային</i>	<i>Ատամնային</i>	<i>Լնդային</i>	<i>Քմային</i>	<i>Ետնաքմային</i>	<i>Հագագային</i>	<i>Կոկորդային</i>
<i>Հպական</i>	<i>խուլ ձայնեղ</i>	p	t		č	k	q	(¹)
		b	d		j	g		

Նեղվածքային	խուլ ձայնեղ	f v	s z		š ž		x γ	
Թրթռացող				r				
Չայնորդ				l	y			h
Ռնգային		m	n					

Մրանցից *k*-ն, *g*-ն, *j*-ն և *č*-ն պարսկերենի համապատասխան հնչյունների համեմատությամբ արտասանվում են ավելի ետնային դիրքում և կարճ ձայնավորներից առաջ, ի տարբերություն պարսկերենի, խիստ քմայնանում են՝ ընդհուպ մոտենալով համապատասխանաբար *č*, *j*, *dz* և *ts* բաղաձայնների արտասանությանը, օր. *kadu* [k'ædu] «դրում», *kója* [k'ója] «կղանք, անգա [ang'æ] «մեղու», *čam* [č'æm] «ուլորան», *jörāb* [j'örāb] «գուլպա» և այլն:

Իրեն հաջորդող և նախորդող *o*-ի միջև գտնվելիս *g*-ն արտասանվում է ավելի ձայնեղ կոկորդային տարբերակով և արտասանական ձայնածավալով մոտենում է *γ*-ին, օր. *mogo* [moyo] «պետք է», *mogostem* [moyostem] «ցանկանում էի» և այլն:

Նեղվածքային *ž* բաղաձայնը հանդիպում է շատ հազվադեպ պարսկերենից փոխառյալ ձևերում, մասնավորապես *eždehā* «աժդահա» բառում, ինչպես նաև *hižda* «տասնութ» և *nužda* «տասնինը» թվականների կազմում:

Լնդային *r* բաղաձայնը խուլ է կամ մասամբ ձայնեղ-թրթռուն նրբերանգով, ձայնավորից առաջ ունի թույլ արտահայտված շնչեղություն, օր. *raz* [r'az] «խաղողի այգի»:

Խուլ *q* բաղաձայնը հանդիպում է հիմնականում արաբերենից կամ ատրպատականյան թյուրքերենից փոխառյալ բառերում, մինչդեռ բուն բարբառային ձևերում վկայված է միայն ձայնեղ *γ*-ն, որն էլ կարող է փոխարինել *q*-ին նաև փոխառություններում, օր. *yabā* < արաբ.-պարսկ. *qabā* «կապա», *xarmanloy* < թյուրք. *xarmanloq* «դեզը դեռ չհավաքած վիճակում»: Ռնգային *n* հնչույթը բացի ռնգային-ատամնային տարբերակից իր մեջ ներառում է նաև ետնաքմային [ŋ] որը հայտնվում է միայն *g*-ից հետո, օր. *kolong* [kolong] «քլունգ», *anga* [angæ] «մեղու» և այլն:

Կոկորդային դադարի բնույթ կրող արաբական *ɛ* (‘) բաղաձայնը հանդիպում է միայն փոխառյալ բառերում, այն էլ լոկ «ուսյալ խոսքում», իսկ սովորաբար այն ուղղակի կորչում է, առանց ազդելու հաջորդող և նախորդող ձայնավորների վրա, օր. *ādat* < արբ.-պրս. *‘ādat* «սովորույթ», *ājez* < արբ.-պրս. *‘ājez* «անկարող» և այլն:

Բաղաձայնները խլանում կամ կորցնում են իրենց ձայնեղությունը խուլ բաղաձայնի հարևանությամբ, օր. *esparza* «լյարդ», *espeja* «ոջիլ» և այլն:

Բարբառը խուսափում է ձայնավորների միջև հնարավոր հորանջից կամ կոկորդային դադարից, որն իրականացվում է հիմնականում կցույթի միջոցով,

մասնավորապես այն դեպքերում, երբ ս-ն նախորդում է որևէ այլ ձայնավորի սրան հաջորդում է միջանկյալ թույլ քմային *y*-ն, որը նախորդ ձայնավորի հետ վերաճում է երկհնչյունի, օր. *ruyan* «յուղ», *vuya* «ջուր» և այլն:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում ներկայացվում են հին իրանական – Թաքեստանի բարբառ բաղաձայնական համակարգերի պատմական հնչյունական համապատասխանությունները: Արևմտաիրանական բարբառների մեծ մասի նման Թաքեստանի բարբառի հնչյունական համակարգը նույնպես, հիմնականում բաղաձայնների ոլորտում, խիստ արժանահավատ և կարևոր պատմական զարգացումներ է հանդես բերում:

Չայնավորները, որպես կանոն, ենթարկվում են զարգացման այն հիմնական օրինաչափություններին, որոնք հատուկ են գրեթե ողջ արևմտաիրանական բարբառային զանգվածին՝ սկսած ծայր հյուսիս-արևմուտքում տարածված քրդական բարբառներից մինչև Կենտրոնական Իրանի և Պարսից ծոցի առափնյա շրջաններում խոսվող լեզուները իհարկե, յուրաքանչյուր բարբառին կամ լեզվին բնորոշ ներքին յուրահատկություններով և զարգացումներով հանդերձ:

Հետևաբար, ցանկացած հյուսիսարևմտյան իրանական լեզվի կամ բարբառի բաղաձայնական համակարգը պատմական զարգացման տեսանկյունից պետք է հանդիսանա վերլուծության այն հիմնական ելակետը, որը թույլ է տալիս որոշարկել տվյալ բարբառի դիրքն արևմտաիրանական լեզուների շարքում:

Պատմական հնչյունական զարգացումների առումով Թաքեստանի բարբառը ներկայանում է որպես տիպիկ հյուսիսարևմտյան իրանական լեզու՝ հ. իր. *dw- > թաք. b-: *bar* «դուռ» < հ. իր. *dwara-, հմմտ.՝ ն. պ. *dar*, քրդ. *dar*, բայց պրթ. *bar*, թալ *ba* «դուռ», զազ. *bar*, հ. պրս. *duvara-*, հ. հւ. *dvari-*; հ. իր. *w- > թաք. v-: *varg* «զայլ» < հ. իր. *wřka-, հմմտ.՝ ալ. *vəhərka-*, թալ. *vag / vay*, մ. պ. *vark*, ն. պ. *gurg*, քրդ. *guř*; հ. իր. *sp- (ալ. *sp-*, հ. պրս. *s-*) > թաք. *sp-*: *espeja* «ոջիլ» < հ. իր. *spiša-, հմմտ.՝ ն. պ. *šipiš*, թալ. *səbəž*, մազ. *ešpij*, ալ. *spiš-*; հ. իր. *-θr- (ալ. *-θr-*, հ. պրս. *-ç-*, պրթ. *-hr-*, մ. պրս. *-s-*) > թաք. *-r-*: *dāra* «մանգաղ» < հ. իր. *daθra- (**dahr* ձևի միջոցով), հմմտ.՝ թալ. *deru*, ն. պ. *dās*; հ. իր. *fr- (պրթ. *hr-*, մ. պրս. *fr-*) > թաք. *r-*: *berutan* «վաճառել» < հ. իր. *frā-vāk-, հմմտ.՝ ալ. *vāk-* «խոսել», *frā-* բայական նախածանցով *frā-vaxš-* «հայտարարել, ձայնել», ն. պ. *forūxtan*, քրդ. *firotin*, թալ. *havate*, հւր. *heröte*, մազ. *rotan*; հ. իր. *-č- > թաք. *-j-*: *vāj-* «ասել», հմմտ.՝ թալ. *vož- (պատմական ներկայի հիմքը պահպանվել է ոչ բայական *duavož* «ստախոս», հմմտ.՝ *du* «սուտ») < հ. իր. *wača- (*√wak-*: *wač-), հմմտ.՝ ալ. *vača*, *vačya-*, հ. հւ. *vač-*, պրթ. *važ-* «ասել, խոսել» և այլն:

Թաքեստանի բարբառի բաղաձայնական համակարգի՝ պատմա-համեմատական կտրվածքով ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց է տալիս,

որ չնայած վերջինում առկա հարավարևմտյան խիստ սակավ բաղաձայնական զարգացումներին, որոնք, անշուշտ, պայմանավորված են «պարսկական» ազդեցությամբ, օր.՝ հ. իր. *j- (ավ. j-, բայց հ. պրս. z) > թաք. *ž- > z-: zaniya «կին» < հ. իր. *jani-, հմմտ.՝ ավ. janay-, մ. պ. zan, ն. պ. zan, պրթ. žan, թալ. žen, քրդ. žin, հմմտ.՝ սագգ. zeniya, քաջ. ženiya, քար. yan, հար. yan և այլն, այն հստակորեն պահպանում է հյուսիսարևմտյան իրանական լեզուներին և մասնավորապես, այսպես կոչված, մերձկասպյան իրանական բարբառներին, որի մաս է նաև հարավթաթական բարբառախումբը, բնորոշ բաղաձայնական զարգացումների գրեթե ողջ բույլը:

ԳԼՈՒԽ 3. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թաքեստանի բարբառում գոյականը տարբերակում է սեռի (արական-իգական), հոլովի (ուղիղ – թեք) և թվի (եզակի – հոգնակի) կարգեր: Հարավթաթական բարբառների մի մասին հատուկ քերականական սեռի (արական – իգական) տարբերակումը Թաքեստանի բարբառախմբի առանձնահատկություններից է, որը վերջինս մոտեցնում է հատկապես Խախալի և Շահռուդի թաթական բարբառներին: Նախադասության մեջ գոյականի կապը և հարաբերությունները քերականական այլ անդամների հետ արտահայտվում են՝ 1) նախադրություններով և ետադրություններով; 2) հոլովական վերջավորությունների միջոցով; 3) շարադասությամբ: Այսպես կոչված, «իզաֆեթային կառույցը», երբ հատկացուցիչն ու հատկացյալը և որոշիչն ու որոշյալը միմյանց են միանում հատուկ ցուցիչով (ինչպես պարսկերենում), ունի պարսկերենից փոխառյալ բնույթ և հանդիպում է որպես կանոն ամբողջապես այս լեզվից մուտք գործած բառակապակցությունների կազմում: Քալասուրի բարբառում առկա են հոգնակիակերտ երկու մշտապես շեշտակիր վերջածանցներ, որոնք համապատասխանաբար օգտագործվում են կախված գոյականի հոլովից:

Թաքեստանի բարբառում բոլոր գոյականներն անխտիր բաժանվում են երկու սեռերի: Բնական սեռային տարբերություն ցույց տվող գոյականները բաշխվում են ըստ համապատասխան սեռերի առանց վերջավորության տարբերակման, որոշ դեպքերում դա վերաբերում է նաև բնական սեռ չունեցող գոյականներին ևս, օր.՝ ար. fera «տղա», իգ. titiya «աղջիկ», ար. xores «աքլոր», իգ. karga «հավ» և այլն:

Մյուս բոլոր դեպքերում քերականական սեռն արտահայտվում է արականի դեպքում առանց հատուկ վերջավորության, հաճախ, բայց ոչ բացառապես բաղաձայնով իսկ իգականի դեպքում՝ անշուշտ –a ձևությի առկայությամբ, օր.՝ ար. kötāb «գիրք», իգ. angora «խաղող», ար. sōmār «հարդ», իգ. kelma «որդ» և այլն:

Չնայած անշեշտ –a վերջավորության բացակայությանն իգական սեռին են դասվում նաև հետևյալ գոյականները՝ čerā «ճրագ», mā «ամիս», calā «այգիների և դաշտերի միջև սահման հանդիսացող անմշակ բարակ հողակտոր», rā «ճանապարհ, ուղի», kolo «գլխարկ»: Իգական սեռի –a ցուցիչը կարող է ավելանալ նաև կանացի հատուկ անուններին, ըստ որում նաև նրանց որոնք արաբերենում արդեն իսկ ունեն իգական վերջավորություն, օր.՝ Zeynaba «Զեյնաբ», Golāba «Գոլաբ», Mayrama «Մարիամ», Xadijja «Խադիջա», Fātemia «Ֆաթեմա» և այլն:

Թաքեստանի բարբառում անկախ սեռային պատկանելությունից գոյականների հոգնակին կազմվում է հոգնակիակերտ մշտապես շեշտակիր –(y)on վերջածանցով, որը համապատասխանաբար օգտագործվում է թե ուղիղ և թե թեք հոլովով դրված գոյականների դեպքում, օր.՝ եզ. čarvā «գառ» - հզ. čarvāyon «գառներ», եզ. mardak «մարդ» - հզ. mardakon «մարդիկ», եզ. čöst «չուստ» - հզ. čöston «չստեր» և այլն:

Անշեշտ –a ձայնավորով վերջացող և հիմնականում իգական սեռի պատկանող գոյականները հոգնակիի վերջավորությունից առաջ կորցնում են ձայնավորը, դա վերաբերում է նաև թեք հոլովով դրվածներին, օր.՝ եզ. piya «հայր» - հզ. piyon «հայրեր» նաև թեք. h., եզ. asba «շուն» - հզ. asbon «շներ», եզ. karka «հավ» - հզ. karkon «հավեր», եզ. qālāčā «ազոավ» - հզ. qālāčōn «ազոավներ» և այլն:

Բարբառում գոյականը հստակորեն տարբերակում է հոլովի երկաստիճան (ուղիղ – թեք) կարգ: Ուղիղ հոլովով դրված անունը որևէ հոլովական վերջավորություն չի ստանում՝ եզակիում ներկայանալով գոյականի անփոփոխ ձևով, իսկ հոգնակիում՝ համապատասխան հոգնակիակերտ վերջավորությամբ: Բաղաձայնով վերջացող գոյականների թեք հոլովը եզակի թվում կազմվում է անշեշտ –e, իսկ հոգնակիում շեշտակիր –(y)on հոգնակիակերտ–հոլովակերտ վերջավորությունների միջոցով, օր.՝ եզ. armāz «հագուստ» - թեք. h. armāze, հզ. armāzon «հագուստներ» թեք. h. armāzon և այլն: Արական սեռի –a ձայնավորական ավարտ ունեցող գոյականների դեպքում եզակի թվում անշեշտ –a–ն փոխվում է –i–ով, օր.՝ եզ. fera «տղա» - թեք. h. feri, հզ. feron «տղաներ» - թեք. h. feron և այլն: Իգական սեռի –a ձայնավորական ավարտ ունեցող գոյականների դեպքում իգական սեռի ածանցը ստանձնում է նաև թեք հոլովի գործառույթ, որի հետևանքով գոյականը ձևաբանական փոփոխության չի ենթարկվում, օր.՝ եզ. angōra «խաղող» - թեք. h. angōra «խաղող», հզ. angōron «խաղողներ» - թեք. h. angōron և այլն:

Բարբառում անորոշ առումը, ինչպես նաև միակությունն արտահայտվում է իմաստային տեսակետից միմյանցից ոչնչով չտարբերակվող անորոշ–միակության i նախադաս հոդով և ետադաս, կցական բնույթ կրող և մշտապես անշեշտ անորոշ–միակության i ցուցիչով, որոնք հանգում են i «մեկ» թվականին օր.՝ i šāy «մի ձյուղ, ինչ–որ ձյուղ» կամ mardaki «մի մարդ, ինչ–որ մարդ»:

Հարավթաթական Թաքեստանի բարբառում ածականը չի տարբերակում հոլովի, թվի և քերականական սեռի կարգեր:

Ինչպես հարավթաթական բարբառների մեծ մասում որոշչային կառուցում անկանը գոյականի հանդեպ, որպես կանոն, ունի նախադաս դիրք և վերջինիս հետ կապակցվում է երբեք շեշտ չստացող –a ցուցիչի միջոցով, օր. xora karka «լավ հավ» (xor «լավ», karka «հավ»), sörx a asifa «կարմիր խնձոր» (sörx «կարմիր», asifa «խնձոր»), qaşanga titiya «գեղեցիկ աղջիկ» (qaşang «գեղեցիկ», titiya «աղջիկ»), derva rā «հեռու ճանապարհ» (derv «հեռու», rā «ճանապարհ») և այլն:

Չտարբերակելով սեռի, հոլովի կամ թվի կարգեր անկանն այս տեսանկյունից երբեք չի համաձայնեցվում գոյականի հետ, օր. իգ. եզ., ուղիղ հ. xora zaniya «լավ կին», հզ., թեք հ. xora zaniyon (xor «լավ», zaniya «կին») և այլն: Որակական անկաններն ունեն համադրական միջոցներով կազմվող համեմատության աստիճանների զարգացած համակարգ, չնայած նախադասության մյուս անդամների հետ կարող են հարաբերվել նաև վերլուծական միջոցների օգտագործմամբ: Անկանի համեմատական աստիճանը կազմելու համար օգտագործվում է -tar վերջածանցը, օր. xortar «ավելի լավ», qaşangtar «ավելի գեղեցիկ», pellatar «ավելի մեծ», gujiltar] «ավելի փոքր» և այլն: Գերադրական աստիճանը կազմվում է -(a)yn վերջածանցով, օր. gujilayn «ամենափոքր, փոքրագույն», pellaayn «ամենամեծ, մեծագույն», xorayn «ամենալավ, լավագույն» «ամենալավ, լավագույն», nakuyyn «ամենաբարի» և այլն: Բացի այս, գերադրական աստիճանի իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական միջոցներով:

Թաքետանի բարբառում վկայված են քանակական, դասական, կոտորակային և բաշխական թվականներ: Թվականներն ընդհանրապես չեն տարբերակում հոլովի կամ սեռի կարգ՝ այս տեսանկյունից չհամաձայնեցվելով իրենց հետ շարահյուսական կապի մեջ մտած նախադասության այլ անդամների հետ: Այսուհանդերձ, Թաքետանի բարբառախմբի անդամ Չալի, Մագաբադի և Էբրահիմբադի բարբառներում վկայված է i «մեկ» թվականի իզական սեռի ya ձևը, որը համաձայնեցվում է գոյականի հետ, օր. i fera «մի տղա», բայց ya titiya «մի աղջիկ» և այլն: Բարբառում քանակական թվականները հարավթաթական բարբառների մեծ մասի և հյուսիսային թալիշերենի նման հանդես են գալիս հիմնականում ոչ թե բնիկ, այլ պարսկերենից փոխառյալ ձևերով:

Կազմության առումով առաջին տասնյակի քանակական թվականները պարզ են: Երկրորդ տասնյակի (11 – 19) թվականները պարսկերենի նմանությամբ կազմվում են երկու ձևությից՝ նախադաս միավորից և ետադաս տասնավորից բաղադրված պատմական բարդությունների տեսքով, որոնք, աներկբայորեն, արդյունք են բավական վաղ բնույթ կրող ձևակազմական արխաիզմի: Բոլոր բարդ թվականները կազմվում են -(h)e կցությի օգնությամբ, օր. viste yek «տասներեք», čele yek «քառասուն մեկ», sade dō «հարյուր երկու», diviste čārda «երկու հարյուր տասնչորս», diviste viste dō «երկու հարյուր քսաներկու» čār hezāre panjāhe havt «չորս հազար հիսունյոթ» և այլն: Քանակական թվականը մշտապես ունի նախադաս կիրառություն: Ըստ որում, արևմտաիրականական լեզուների մեծամասնության նման Թաքետանի բարբառում ևս թվականին հաջորդող

գոյականը միշտ գործածվում է եզակի թվով, օր.՝ *čār titiya* «չորս աղջիկ», *panj luyās* «հինգ աղվես», *sō kiya*, «երեք տուն» *vist karka* «քսան հավ» և այլն:

Դասական թվականները Թաքեստանի բարբառում կազմվում են քանակական թվականներին ավելացնելով –em շեշտակիր վերջածանցը: «Երկու», «երեք» և «հինը» թվականների դեպքում հավանաբար արմատական –ō հնչյունի առկայությամբ պայմանավորված ունենք –yem, իսկ –a և ā ձայնավորներով վերջացող «տասնմեկից», «տասնինը» և «հիսուն», «յոթանասուն», «ութսուն» թվականների պարագայում –m հնչյունավորված տարբերակները: «Մեկ» թվականի դասականի ձևն արդյունք է բնիկ *i* թվականի դուրս մղման և պարսկերենից փոխառյալ *yek* «մեկ» թվականի փոխառության: Գոյականի հետ միանալիս դասական թվականները միշտ կիրառվում են նախադաս դիրքում և գոյականին միանում –a հոդակապ-կցույթի միջոցով, օր.՝ *dōyema mardak* «երկրորդ տղամարդը», *yekema rev* «առաջին օրը», *panjema fera* «վեցերորդ որդին» և այլն:

Բարբառում կոտորակային թվականները կազմվում են բացառապես վերլուծական–նկարագրական եղանակով՝ քանակական և դասական թվականների հարադրությամբ, ինչպես և պարսկերենում է օր.՝ *yek dōyem* «մեկ երկրորդ», *yek sōyem* «մեկ երրորդ», *čār panjem* «չորս հինգերորդ» *šōš dam* «վեց տասներորդ» և այլն:

Բաշխական թվականներն, ինչպես և պարսկերենում կազմվում են բացարձակ թվականների կրկնությամբ, օր.՝ *i-i* կամ *yek-yek* «մեկական, բոց. մեկ-մեկ», *dō-dō* «երկուական, բոց. երկու երկու», *panj panj* «հինգական, բոց. հինգ-հինգ» և այլն:

Թաքեստանի բարբառում կարելի է զանազանել դերանունների հետևյալ տիպերը՝ անձնական, ստացական, կցական, ցուցական, անդրադարձ, հարցական, ժխտական, որոշյալ և անորոշ: Անձնական դերանուններն, ի տարբերություն հարավթաթական բարբառախմբի ներկայացուցիչների, որոշ մասի (Չալի, Քաջալի) կորցրել են ուղիղ և թեք հոլովների հակադրությունը, որը ցեղակից բարբառներում և լեզուներում դրսևորվում է անխտիր բոլոր դեմքերում, 3–րդ դեմքում դրանք պատմականորեն հանգում են ցուցականի ձևին: Երրորդ դեմքի անձնական դերանվան գործառույթը շատ հաճախ կարող է ստանձնել նաև մոտ հեռավորության համար կիրառվող եզակի թվում *em* «այս», իսկ հոգնակիում՝ *emā*, *emnā* «սրանք» ցուցական դերանունները:

Անձնական դերանունները նախադասության մեջ հիմնականում կիրառվում են որպես ենթակա առանց բացառության բոլոր ժամանակաձևերում՝ թե՛ անանցողական և թե՛ անցողական բայերի դեպքում, օր.՝ *āv dir boma xarmanluc* «նա ուշ եկավ դեզերի հավաքման վայրը» կամ *az vindem ke vuyaš āxa* «ես տեսա, որ ջուր խմեց» և այլն:

Ստացական դերանունները նոր արևմտաիրանական լեզուների համակարգում բնորոշ են գրեթե բացառապես հարավթաթական բարբառախմբին: Դրանք որպես կանոն հանգում են հին իրանական **hača-* «-ից» նախադրությանը, որը միանալով անձնական դերանվան սեռական հոլովի ձևին արտահայտում էր

ստացականություն Թաքեստանի բարբառում վկայված են ստացական դերանունների բոլոր ձևերը: Հոգնակի թվի 2–րդ դեմքում ստացական և անձնական դերանունները ձևով նույնական են: Ստացական դերանունները հանդես են գալիս բացառապես պատկանելություն ցույց տվող հատկացուցչային կառույցների շրջանակներում, որպես ուղիղ, անուղղակի և ետադրության հետ կիրառվող խնդիր, օր.՝ *em ešta kötāb e* «սա քո գիրքն է», *em jāva galoni ya* «սա նրա վզնոցն է», *ā kiya jānā ye* «այն տունը նրանցն է» և այլն:

Թաքեստանի բարբառի քերականական համակարգում կարևոր դերակատարություն ունեն կցական կամ էնկլիտիկ դերանունները, որոնք շեշտ չեն ստանում և փաստորեն ձուլվում են իրենց նախորդող նախադասության անդամին: Կցական դերանունները կարող են կիրառվել հետևյալ գործառույթներով՝ ա) ավելանալով գոյականին՝ ցույց տալ պատկանելություն կամ ստացականություն՝ այս առումով, փաստորեն, հանդես գալով ստացական հոդի գործառույթում, օր.՝ *piya-m* «հայրս», *kiya-y* «տունդ», *berā-š* «[նրա] եղբայրը»; բ) անցյալ ժամանակներում անցողական բայերի դեպքում համաձայնեցման էրգատիվ կառույցի պայմաններում կցական դերանուններն ավելանում են նախադասության ստորոգյալին նախորդող ուղիղ խնդրին՝ այսպիսով ստանձնելով ենթակայի պաշտոնը, կամ, ավելի ճիշտ, արտահայտելով նախադասության ենթական, օր.՝ *gandem-em beke* «ես ցորենը ցանեցի», *dušā-yon birit* «նրանք դռարը թափեցին»; գ) կցվելով անդրադարձ դերանվանը՝ վերջինիս հաղորդում է սաստկական իմաստ և որոշարկում դեմքն ու թիվը, օր.՝ *xoštan-em* «ես ինքս», *xoštan-i* «դու ինքդ» և այլն:

Ցուցական դերանունները բարբառում երկաստիճան են, այսինքն՝ ցույց են տալիս մոտ և հեռու առարկաներ ու անձեր: Ցուցական դերանունները դրսևորում են սեռային (միայն եգակիում արական - իգական) թվային (եգակի – հոգնակի) և հոլովական (ուղիղ – թեք) հակադրություն:

Ուղիղ հոլովով դրված ցուցական դերանունները նախադասության մեջ հանդես են գալիս ենթակայի դերով, օր.՝ *em kötāb e* «սա գիրք է», *āva gōrbi yā* «այն կատու է» և այլն:

Թեք հոլովով դրված ցուցական դերանունները նախադասության մեջ հանդես են գալիս՝ ա) ստացականության կամ սեռական հոլովի իմաստով, օր.՝ *jive kiya* «սրա տունը», *jāve xemna tešneym* «դրա արյան ծարավն են»; բ) որպես ստորոգյալի ուղիղ խնդիր, օր.՝ *jive-š ke bešnavast* «նա, որ սա լսեց», *jāva dāvij defār* «դա (իգ.) պատից կախիր»; գ) ետադրություններից առաջ, օր.՝ *jive rā xalat ādi* «սրան ընծա տուր», *jinā xo* «սրանցից» և այլն:

Թաքեստանի բարբառում առկա է միայն մեկ՝ *xoštan* «իր, ինքն (свой, сам)» անդրադարձ-սաստկական դերանունը: «Իր, յուր» իմաստով գործածվելիս այն ունի բացառապես նախադաս կիրառություն, օր.՝ *xoštan šahar* «իր քաղաքը», *xoštan fera* «իր տղան», *xoštan mardak* «իր ամուսինը» և այլն:

«Ինքն» իմաստով կիրառության ժամանակ, որպես կանոն, այս դերանվանն ավելանում են կցականները, որոնք ավելի շեշտում կամ

սաստկացնում են վերջինիս իմաստը՝ նրան հաղորդելով նաև դիմային և թվային որոշարկում: Ըստ որում, անձնական դերանունն այս դեպքում հաճախ ուղղակի բաց է թողնվում, օր. (az) xoštan -em «(ես) ինքս», (ta) xoštan-i «(դու) ինքդ» և այլն:

Ոչ միայն Թաքեստանի բարբառում, այլև ողջ հարավթաթական բարբառախմբում ընդհանրապես, խոսքի այլ մասերից լիովին տարանջատված մակբայների թիվն այնքան էլ մեծ չէ: Խոսքիմաստային առումով դրանք կարելի է դասակարգել հետևյալ խմբերում ա) տեղ ցույց տվող մակբայներ, օր. engā «այստեղ», ogā «այնտեղ», jor «վերևում»; բ) ժամանակի մակբայներ, օր. arō «այսօր», azira «երեկ», periašo «երեկ գիշեր», söb «վաղը», sarā «վաղը չէ մյուս օրը»; գ) քանակական մակբայներ, օր. ferāvon «շատ», qālabā «շատ», kam «քիչ»; դ) yebāra «միանգամից», šāyad «գուցե, միգուցե», gōyā «ասես» և այլն:

Թաքեստանի բարբառում առկա է ետադրությունների բավական զարգացած համակարգ, մինչդեռ նախադրությունների դերը խիստ սահմանափակ է, որն իր հերթին այժմ արդեն հանգեցրել է դրանց գրեթե լիակատար դուրս մղման: Ընդհանրապես հարավթաթական բոլոր բարբառներում ետադրությունները, որպես կանոն, գերակշռում են, ինչն էլ տարրորոշում է այս բարբառախումբն արևմտաիրականական լեզուների ամբողջ համակարգում: Ետադրություններից առաջ դրվող գոյականները գործածվում են միայն ուղիղ հոլովով, օր. ruxuna da vuya māya «գետից ջուր է գալիս», mārem rā mājem «մորս կասեմ» և այլն:

Բարբառում լայն կիրառություն ունի միայն մեկ նախդիր՝ tā «մինչև», որը կիրառվում է թե՛ տարածական և թե՛ ժամանակային իմաստով, օր. tā key «մինչև ե րբ», engāde tā Zangon dō sāt rā vištar niyā «այստեղից մինչև Չանջան երկու ժամից ավել ճանապարհ չի լինի» և այլն:

Համադաս կապակցություններ ձևավորելու համար Թաքեստանի բարբառում օգտագործվում են հետևյալ շաղկապները. միավորիչ՝ (i)yon «և, ու», emon «և, ու» (կիրառվում է բացառապես az «ես» դերանվան հետ), ve «և, ու», da «էլ» (ունի միայն ետադաս կիրառություն), i (ձայնավորից հետո y) «էլ, նույնպես» (կարող է կիրառվել da-ի հետ միասին), միավորիչ-հավելական՝ da ... da «էլ ... էլ», տրոհական-բաժանական՝ yā «կամ», yā ... yā «կամ ... կամ», շե ... շե «թե ... թե»: Կախյալ հարաբերություններ արտահայտելու համար վկայված են հետևյալ ստորադասական շաղկապները. āmmā «բայց», ke «որ, երբ, որովհետև», պայմանական age «եթե»:

Թաքեստանի բարբառն աչքի է ընկնում բավական զարգացած և հարուստ բայական համակարգով: Իրանական բոլոր լեզուներին բնորոշ երկհիմք (ներկայի հիմք – անցյալի հիմք) հակադրության սկզբունքի վրա հիմնված բայական խոնարհման ողջ համակարգը Թաքեստանի բարբառում բավական լավ պահպանված է՝ ի հակադրություն հարավթաթական բարբառների հյուսիսային խմբի կամ թալիշերենի, որտեղ պատմական զարգացման ընթացքում բայերի մեծ մասը ուղղակի կորցրել է հիմքերից մեկը: Այս տեսանկյունից հարավթաթական Թաքեստանի բարբառախումբը մի կողմից մոտենում է երկհիմք խոնարհման

համակարգը հստակորեն պահպանող ցեղակից ոչ թաթական իրանական լեզուների մեծամասնությանը, իսկ մյուս կողմից դրսևորում ակնհայտ տարբերություններ նշված համակարգը նորաբանական բնույթի լուրջ փոփոխությունների ենթարկած հյուսիսային խմբի ներկայացուցիչներից և թալիշերենից:

Այսուհանդերձ, վկայված են նաև միահիմք համակարգին անցման գործընթացի հետևանքով ի հայտ եկած որոշ բայական ձևեր: Այն Թաքեսթանի բարբառում բայերի մի խմբում իրականանում է գլխավորապես պատմական ներկայի հիմքի լիակատար դուրս մղման, իսկ այլ դեպքերում՝ անցյալի հիմքի ամբողջական կորստյան հետևանքով:

